

տկարացած և պարապորդութեամբ ա-  
մէն տեսակ անկարգութեանց ու մեղ-  
կութեանց մէջ ընկղմած ըլլալով :

Ի՞այց ինչ բանի համար առանձինն  
Ուստան վրայ կը խօսիմ : Ո՞իթէ չտե-  
սանք որ գաստիարակութեան ամէն  
մէկ մասերէն անմեկնելի է Ի՞արեկը-  
թութիւր : 'Ի՞աստիարակութեան տե-  
ղոյ մը դարութեանց , կրօնի , բարե-  
կրթական , ու գարմանողական ամէն  
կարգաւորութիւնները , և այն կարգն ու  
կանոնները որ իբրու գաստիարակու-  
թեան վախճանին համելու համար ա-  
մենայարմար ճանցուած ու ընդունելի  
եղած են , բոլոր ասոնք Բարեկրթական  
'ի գործ գնել կու տայ , ու գործադրու-  
թեանը կ'առաջնորդէ : Առ դարձեալ  
իր հսկողութիւնը առջելը կ'առնէ այն  
ամէն բանի , որ կրնայ վնաս մը բերել .  
և իր ճարտարութեամբ գործածած  
խստութիւնն է , որ եղած կանոնազան-  
ցութեցն ալ դարմանը կը մատուցանէ :

Ի՞անկով տղաքը առաքինի ընելու  
համար բռնուած կարգը ,

Տղաքը գիտուն ընելու համար բը-  
նուած կարգը ,

Ու նիւթական բաներն ալ կարելի  
եղածին չափ օգտակար կերպով՝ դաս-  
տիարակութեան հոգեորական նպա-  
տակներուն հետ զուգակցելու համար  
բռնուած կարգը , ինչպէս են մարմնոյ  
առողջութիւնն ու ժամանակի բաժան-  
մունքը , ասոնք ամէնն ալ Ի՞արեկը-  
թութեան տակ կ'երթան . Ի՞արեկը-  
թութեան կ'իյնայ գարոցները ծաղկե-  
ցրնելը , պահպանելն ու պէտք որ ըլ-  
լայ՝ նաև վերանորոգելը :

Ի՞արեկըթութիւնը կը պատրաստէ ,  
կ'ապահովցընէ ու կը պաշտպանէ դը-  
պրոցին մէջ եղած ամէն օգուտը :

Ինքը կը նախատեսանէ այն չարիքնե-  
րը , որ հնարաւոր են . ինքը անոնց առ-  
ջելը կ'առնէ իր հսկողութեամբը , ինքը  
կը մերժէ իրեն արիութեամբը , ինքը  
կը պատժէ՝ որպէս զի օրինակ ըլլայ ու-  
րիշներուն , ու տուած պատիմներն ալ  
յանցաւորը լաւագոյն կ'ընեն :

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ

### ՄԱՀ ԵՒՐԻԱՂԵՍՑ ԵՒ ՆԻՍՈՍԻ

**Վ**իրզիլիոսի Ենէական զիւցազներգութեան գեղեցկազոյն զրուազներէն մէկն է  
Եւրիաղեայ ու Նիսոսի մահը , որ իր ամբողջութեան մէջէն հանած՝ առանձին ալ պատ-  
շած կը համարինք գնելը Օրազրիս մէջ . ասիկայ շատ՝ թէ որ չըսեմ ամէն նոր բանա-  
ստեղծութիւններէ զերազանցելով աւելի օգտակար կրնայ ըլլալ , տեսնելով 'ի նմա-  
ընթերցողք փափկութիւն ու պարզութիւն , և իմաստներու սրանչելի ու զանազան բա-  
ցատրութիւններ , ուսկից միայն կրնանք մատենազրութեան և ազնուական բանաստեղ-  
ծութեան ախորժ ու օրինակ առնել մեզի , և որոնք Վիրզիլիոսի՝ առանձին զերազանց  
կատարելութիւններն են :

**Ա**յս ինչ դիմեալ ի մեսապեանս յարձակէր ' ,  
Ուրանօր հուրն ահա յետին շիջաննէր ,  
Եւ երիվարք՝ որպէս օրէնն էր՝ արձակը  
Արածէին ի դալարւօջն ի Ճարակ ,  
Հայնժամ՝ Եիսոս սուղ ինչ առ նա բարբառի ,  
Անձել ըզտենչ կոտորածոյն ըզկարի .  
Ի՞աղարեսցուք , արդ տիւն սոսիս հասեալ գայ .  
Շատ իսկ վաստակքս իցեն , բացեալ մեզ ահա

Ինդ բանակետը թշնամեաց ձանապարհ :  
 Ըքեալ թողուն անդ առնազէնս անհամար  
 Յարծաթակուռ պըջնեալս ի զարդ եւ բաժակս  
 Ինդ մեծագինըս գեղաւոր տապաստակս :  
 Կապտէ զհուամնեայն Խարիաղոս զասպազէն  
 Եւ ըզկամար պալարակապ ոսկեղէն ,  
 Օոր ճոխն երբեմըն Իեղիկոս ի նըւէր  
 Տիբուրացւոյն հուեմուլոսի յըղեալ էր ,  
 Յորժամ կամէրն ասպընջական իբր ընդ հիւր  
 Շզբացակայն յօդել այնուիկ սերտ ընդ իւր :  
 Ու ի մահուն եթող թուին իւրում զայն ,  
 Ապա հուուտուլք պատերազմաւ զայն կալան .  
 Օայն Խարիաղ աւար առեալ , եւ ընդ վայր  
 Ի կորովի ստանձնէ ի յուս իւր կամար .  
 Եւ զմեսապեայն ըզդիւրակիր սաղաւարտ  
 Իծէ ի գլուխ ի գարգմանակ գեղազարդ :  
 Ուկնին յամուրս ի բանակէն եղեալ դէմ :  
 Յայնժամ հեծեալք երեքարիւր փութաձեմ  
 Մսպարաւորք առ հասարակ երթային ,  
 Եւ զօրավարն ածէր Ո ոլսկենտ ըզնոսին ,  
 Դարձուցանել Տուրնեայ զըրոյցս արքայի  
 Պատգամաւորք լատինական քաղաքի ,  
 Ուինչ այլն ի դաշտըս լեգէոն կազմիկ կայր :  
 Ույն ինչ հասեալք ահա յիւրեանցն ի ձամբար ,  
 Եւ ի պարիսպս անդ պատնիշաց մատչէին ,  
 Տեսին յահեակն ըզդարձ նոցա ի յուղին .  
 Եւ սաղաւարտըն զանըզգոյցն Խարիաղ  
 Ի գիշերոյն մատնեաց նըշոյլ ի նըւաղ ,  
 Ի լուսնակին առեալ շողից անտի փայլ :  
 Յայնժամ Ո ոլսկենտ յայրուձիոյն ձայնարկեալ ,  
 Չէ իսկ եւ չէ , ասէ , տեսիլդ այդ նանիր .  
 Կացէք արք , զի՞նչ ձեզ աստանօր է իւրնդիր .  
 Ու սպառազէնքդ էք , յու ուրեք դիմեալ գնայք .  
 Կոքա ոչ ինչ կըրկնեալ նըմին հակառակ ,  
 Յանտառախիտս անդըր ձեսին տարադէմ ,  
 Ի գիշերոյն ապաստանել ի նըսեմ :  
 Կատի անտի ելից ուղեացըն հըմուտ  
 Կայ հեծելազն արգելուլ շուրջ զելումուտ :  
 Ուացառախիտ գոյր անտառ մեծ անդանօր ,  
 Կըսեմաստուեր խըռկեալ սղոցեօք ահաւոր ,  
 Օոր խիտ առ խիտ պատէին փուշք եւ տատասկք ,  
 Եւ գողուզիք էին ի նմա հետք նըւազք :  
 Կստուերք ոստոց եւ ծանրաբեռն իսկ աւար ,  
 Եւ խէթք յուղւոյն մոլորելց ընդ խաւար ,  
 Կյափանէին ի ձեպելց զլարիաղ :  
 Սոյս ետ յանգէտս ի բաց Խիսոս զերծեալ վաղ  
 Ի թշնամեացն եւ ի վայրաց , որք ապա  
 Կըսեանք ձայնեալ՝ առին կոչումն ի յլլայ .

Աւր լատինոս արքայ յայնժամ զիւրականս  
 զբարձրաբերձ կառուցանէր զասպաստանս :  
 Եւ զկայ առեալ մնալով ընդ վայր ի բացէ  
 նարեկամին իւրում, ՈՎ հեք դու, ասէ,  
 Եւրիաղէ, ուր իսկ լքեալ թողի գքեղ  
 իամ ի խընդիր քո յո ուրեք անկայց ես:  
 Եւ ըզնոսին խընդրելով հետս՝ առնէ դարձ,  
 նդ նենդաւոր անտառին ոաչ կեղակարծ .  
 Եւ ընդ մացառը թափառեալ նա ընդ լուռ,  
 զսրմբակաց լսէ դրընդիւն առ աթուր,  
 լսէ զշրոխնդն եւ ըզփողոց փոյթ ընդ փոյթ  
 զդել խրախոյս յարձակելոցն հետամուտ:  
 Են ինչ ազդեալ ի լսելիսն հընչումն այն,  
 Իհա ետես զլյուրիաղոս նոյն հետայն,  
 Եւ ի վերայ նորա յաղմուկ խառնաձայն  
 Յանկարծահաս խուժեալ ըզգունդն ամենայն,  
 ՈՒնչ նա մատնեալ ի գիշերոյ եւ յուղոյն՝  
 Շիգն ընդունայն եւ վայրապար գործէր գուն:  
 Օ չինչ առնել էր, որ ոյժ եւ որ նրմա զէն  
 Տային կորզել ըզպատանին ի վտանգէն.  
 Դիմագրաւել ի թըշնամիսն էր ի ճահ,  
 Եւ վաղվաղել վիրօք ի պերճ անդր ի մահ:  
 Եա կորովի ճօճեալ բազկաւն իւր զաշտէ,  
 Դէտակն ի վեր բարձր ի լուսինն աղերսէ.  
 Դու լատոնեան դիցուհիդ փառք աստեղաց,  
 Եր զօրավիզն ինձ գու տեսուցդ անտառաց.  
 Ոնէ ի բագինըս քո վասն իմ ի նըւէր  
 Քեզ Խրտակոս հայրն իմ երեք ինչ երեր,  
 Եթէ յորսոց մասն ինչ հանի քեզ յիմոց,  
 Եւ զկամարացդ ինչ կախեցի ըզքոյոց,  
 Կամ արգաղիր ինչ նըւէր ով դիցուհիդ  
 Բնեւեռեցի քեզ ի գըմբէթ մէհենիդ,  
 Տուր արկանել ինձ ի յամբոխդ այդ ըփոթ,  
 Եւ ուղերձեա անդըր զաշտեայս զայս ընդ օդ:  
 Եսաց, եւ յեց անձամբն ողջոյն ի նիզակն՝  
 Ըքձակէ զայն • թըռչի երկաթն, եւ երագ  
 Ծզիշերոյն հերձեալ ըզմէգ հարկանի  
 Ծնդդիմակայն իւր ի յետկոյս Աողմոնի  
 Եւ խորտակեալ թափ ի յընդերսն անցեալ տէգ,  
 Հիզակաբունն անդ ըզտեղի առնու բեկ:  
 Դի ցուրտ յերկիր տապալեալ խոր ի սըրտէ  
 Եա զշերաներմ արեանըն զուղիսը ժայթքէ.  
 Եւ բաբախեն ի հեւըս կուշտքն ի յերկայն:  
 Դառնայ ամբոխն հայի յայս կոյս եւ ի յայն.  
 Անքն յաւելեալ յաջողութեամբն ի խրախոյս,  
 ՈՒիւս այլ կըշոէ գեղարդն ընդ օդս ի վեր կոյս.  
 Յուզի ամբոխն, եւ շըկահեալ տէգն երագ՝  
 Հարկանէ զքունաըն Տակոսի ըզկըրկնակ,

Եւ թափանցանց մըխի յուղեղըն ջերմնեակ ,  
 Ոլեալ Ա ոլսկենտ անդ ի զայրոյթ դըժընդակ ,  
 Ու զարդնընկեց ուրեք ըզձեռնըն տեսեալ ,  
 Եւ ոչ թէ յոր պարտ էր դիմել նրմա վայր ,  
 Հատո ինձ , արդ , ասէ , ի ջերմի ապաժոյժ  
 Օ արժանահաս երկաքանչիւրցդ իսկ ըզայժ ,  
 Եւ յլարիաղ սուսերամերկ յարձակի ,  
 Յայնժամ Ա իսոս գոչէ շուարեալ առ ահի ,  
 Ու եւս ի ստուերս անդ հանդարտել կարացեալ ,  
 Ու այնքանեաց լինել վըշտացըն ժուժկալ 。  
 Օ իս զիս . ահա կամ ոճրագործս առընթեր .  
 Յիս ո՛ հուստուլք , յիս դարձուցէք ըզզէն ձեր ,  
 Վ ըկայ երկինք են ինձ եւ բոյլք աստեզաց ,  
 Օ ի ես բնաւիցն եմ հեղինակ դաւանաց .  
 Ու ինչ իշխեաց դա , ոչ առնել ինչ կարաց .  
 Դա զբարեկամն եւեթ ըզհէք յոյժ սիրեաց .  
 Ա ինչ դեռ նա զայս ասէր , ուժգին մըխեալ սուր  
 Բանայ ըզկողս յարիաղեայ զձինաթօյը .  
 Յերկիր դիակնըն տապալի , եւ արիւն  
 Ինդ գեղանի գնայ ընդ անդամըն նորուն .  
 Եւ պարանոցըն խոնարհեալ ի վայր կոյս ,  
 Դըլուխն ի կախ հակամիտէ յեց ի յուս .  
 Եբր ըզձաղիկ բոսորագեղ թառամեալ  
 Ա ինչ առ աթուր կոխնէ խոփոյն ըզնա սայր ,  
 Եբր ըզկակաչ մինչ խոնարհի ի յերկիր  
 Դ յանձրեւացն ուղիսից եղեալ ծանրակիր ,  
 Դիմէ Ա իսոս ի թըշնամեացն ի ջոլիր ,  
 Դ Ա ոլսկենտեայ եւեթ ի խոանն ի խընդիր ,  
 Եւ ի Ա ոլսկենտ եւեթ պիշ զակն ունելով .  
 Համախըմբեալ շուրջ ըզնովաւ գունդ յոլով ,  
 Երկանէ զնա աստի անտի ի խունապ .  
 Ու ինչ նըւազ լեալ նոցա ինքն ի տագնապ .  
 Ո օձէր ըզտէգըն շանթաձեւ՝ մինչեւ զայն  
 Դ հուստուլեայն եարկ ի ներքս ի բերան ,  
 Ա ինչ նա գոչէրն . եւ չեւ զրաւեալ ի կենաց ,  
 Ը զթըշնամեոյն ի բաց ըզկեանսըն կորզեաց .  
 Եւ զդիակամք սիրելոյն խոց կարեվէր  
 Ինկեալ ի քաղցր ապա ի մահ , անդ հանգչէր .  
 Բարեբաստիկք իսկ արդարեւ երկոքին .  
 Եւ եթէ տաղք իմ զօրեսցեն ինչ սոքին ,  
 Ա ի մըշտայտուշ մօռասցի զձեղ ժամանակ .  
 Ջորչափ ըզկայ ենեականըն զաւակ  
 Եցէ ի վէմ կապիտոլին յանդըղորդ ,  
 Եւ տիրեսցէ հայրըն հուսայ ընդ ոլորտ :